ՀՏԴ 330.1
Տնտեսագիտություն

Շուշանիկ ԱՍՐՅԱՆ
ԱրՊՀ Տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.
E-mail: shushanik.asryan@yandex.ru

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ ԱՀ-ՈՒՄ

ԱՀ տնտեսական զարգացման ընդհանուր միտումները և արտաքին սպառնալիքներով պայմանավորված նոր իրավիճակները, սրելով տնտեսական զարգացման խնդիրները, առանձնակի կարևորությամբ վեր հանեցին ՏԱ ապահովման հարցերը: «Տնտեսական անվտանգության արդի մարտահրավերները ԱՀ-ում» հոդվածում դիտարկվել են արտաքին և ներքին սպառնալիքների բացահայտման, գնահատման, ինչպես նաև այդ սպառնալիքներին դիմակայելու երկրի կարողությունների վեր հանման և լուծման խնդիրները:

Բանալի բառեր՝ *Համաշխարհային տնտեսություն, ԱՀ տնտեսություն, տնտեսական անկում, արտակարգ իրավիճակ, պահանջարկի անկում, սոցիալական խոցելիություն, կառուցվածքային անհամամասնություններ:*

Ш.Асрян

СОВРЕМЕННЫЕ ВЫЗОВЫ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ

Общие тенденции экономического развития Республики Арцах и обусловленные внешними угрозами новые ситуации, обостряя проблемы экономического развития, придали особую важность вопросам экономического обеспечения. В статье «Современные вызовы экономической безопасности в Республике Арцах» были рассмотрены вопросы связанные с оценками внешних и внутренних угроз, а также с возможностями страны противостоять вышеуказанным угрозам.

Ключевые слова: *мировая экономика, экономика АР, экономический спад, чрезвычайная ситуация, спад спроса, социальная уязвимость, структурные дисбалансы*

Sh. Asryan

MODERN CHALLENGES OF THE ECONOMIC SECURITY IN THE REPUBLIC OF ARTSAKH

The general trends in the economic development of the Republic of Artsakh and new situations caused by external threats, exacerbating the problems of economic development, have given special importance to the issues of economic security. The article "Modern challenges of the economic security in the Republic of Artsakh" discussed issues related to the assessment of external and internal threats, as well as the country's ability to confront the above-mentioned threats.

Keywords: *world's economy, economy of AR, economic downturn, emergency situation, decline in demand, social vulnerability, structural imbalances*

Ներկա դրությամբ տնտեսական անվտանգության նոր սպառնալիքները՝ կապված թագավարակի և տարատեսակ սահմանափակումների հետ, ներթափանցել են թե' համաշխարհային և թե' ազգային տնտեսությունների գրեթե բոլոր բնագավառները՝ արտադրության, իրացման, սպառման, ֆինանսական և այլն՝ բացասաբար ազդելով այդ ոլորտների կենսագործունեության, ինչպես նաև դրանց կարգավորման հնարավորությունների վրա: Խախտվել են համաշխարհային արտադրական, զբոսաշրջության, տրանսպորտային ծառայությունների շղթաները, հանքահումքային ապրանքների, նավթի գները նվազել են, ֆինանսական շուկաների ցուցանիշները՝ վատացել: Սպառնալիքների թվին ավելացել է արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի թողարկման ծավալների կտրուկ նվազումը: Մարդկանց սպասումներով, վախերով պայմանավորված սոցիալ-տնտեսական ակտիվության կրճատման, պահանջարկի նվազման զուգահեռ՝ առաջ է եկել ապրանքների և ծառայությունների գլոբալ առաջարկի նվազում: Արդյունքում թե' համաշխարհային և թե' ազգային տնտեսությունները լուրջ խնդիրներ ունեն տնտեսական անկման և տնտեսությունների կայունացման առումով:

Համավարակով պայմանավորված՝ գլոբալ աշխարհի սոցիալտնտեսական բնույթի հիմնախնդիրները ակնհայտ ձևով դրսևորվում են նաև հայկական իրականության մեջ՝ սրելով տնտեսական անվտանգության ապահովման խնդիրները:

Նոր իրավիճակը թելադրել է նաև ՏԱ առաջնահերթությունների ընտրության հարց՝ առավել կարևորելով պարենամթերքների, դեղամիջոցների պետական անհրաժեշտ պաշարների կուտակման, սոցիալական իրավիճակի մեղմացման, տնտեսության խթանման միջոցառումների իրականացումը: Այդ առումով ԱՀ կառավարության կողմից իրականացվել են միջոցառումներ ինչպես վարակի կանխարգելման, այնպես էլ պաշարների կուտակման և սոցիալտնտեսական զարգացման առումով: Ներկա թագավարակը բացահայտել է նաև իրավիճակի կառավարման և խնդիրների իրավական կարգավորման բացերի («Արտակարգ իրավիճակի») անհապաղ լուծման անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ նշված իրավիճակում կարիք կա տարանջատելու տնտեսության արտաքին և ներքին սպառնալիքները՝ հաշվի առնելով դրանց հնարավոր դրսևորումների արդի առանձնահատկությունները.

ԱՀ ՏԱ հիմնական ներքին խնդիրները դրսևորվում են հետևյալ ուղղություններով՝

- արտադրության ծավալի ոչ բավարար մակարդակ,

- սոցիալական անարդարության առկայություն,
- վերատադրական կառուցվածքի ձևախեղում,
- տնտեսության խոցելի կառուցվածք,
- տնտեսության անբավարար մրցունակություն,
- պարենապահովության հիմնախնդիր:

Վերջին 5 տարիների ընթացքում հանրապետությունում արձանագրվել է տարեկան միջինը 10.1% տնտեսական աճ: Համախառն ներքին արդյունքն անվանական առումով աճել է 1.6 անգամ: 2015թ-ի համեմատ տնտեսական ակտիվության ցուցանիշը (ՏԱՑ) աճել է 2.3 անգամ, 2019թ.՝ կազմելով 11.2%, սակայն ՀՆԱ-ի կառուցվածքային անհամամասնությունները էականորեն չեն հաղթահարվել՝ պայմանավորված տնտեսական աճի հիմնականում նույն շարժիչների աճով՝ հանքարդյունաբերության, շինարարության, ծառայությունների աճով: Բնակչության մեկ շնչի հաշվով արտադրանքի թողարկման ծավալը ՏԱ սահմանված նվազագույն մակարդակից դեռևս խիստ փոքր է (2019 թվականին կազմել է 4803 ԱՄՆ դոլար):

Ներքին հիմնախնդիրներից կառուցվածքային ձևախեղումը դրսևորվում է ինչպես ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքի, այնպես էլ տնտեսության վերարտադրական կառուցվածքի անհամամասնության ձևով: Զարգացման բարձր մակարդակ ունեցող երկրներում իրական ներդրումները կազմում են ՀՆԱ-ի առնվազն 45-50%-ը, մինչդեռ ԱՀ-ում այն նոր է մոտենում շեմային մեծությանը: Այսուհետ ներդրումների աճը պետք է զուգորդել անհրաժեշտ կառուցվածքային փոփոխությունների հետ՝ տնտեսության կառուցվածքի արդիականացման և այդ ուղղությամբ փոփոխությունների իրականացման խնդիրը դարձնելով հանրապետության տնտեսական անվտանգության ապահովման առաջնահերթ և կարևորագույն հարց, որի համար անհրաժեշտ է՝

- կառուցվածքային առաջատար տեղաշարժեր ապահովող արտադրություններում պետական աջակցությամբ ներդրումների ներգրավում,
- տնտեսության արդյունավետ կառուցվածքի ձևավորման նպատակով հարաբերությունների կարգավորման իրավական անհրաժեշտ հիմքերի ստեղծում և այլն:

Արդյունաբերական զարգացած երկրներում ՏԱ հասկացությունը ենթադրում է համաշխարհային շուկայում ազգային տնտեսության և նրա ճյուղերի մրցունակություն, որը համաշխարհային տնտեսության տարաբնույթ դրսևորման պայմաններում կարևոր նախադրյալ է երկրի տնտեսության գործունեության զարգացման համար: Հանրապետության տնտեսության ոչ արդյունավետ կառուցվածքի պայմաններում տեղի է ունենում երկրի արդյունաբերական կարողությունների աստիճանական փոշիացում՝ առանց ձևավորելու մրցակցային առավելություններ:

ՏԱ տեսանկյունից վտանգներից մեկը ԱՀ նորարարական գործունեության ցածր տեսակարար կշիռն է թողարկման ծավալում:

Տնտեսության մրցունակության և անվտանգության անհրաժեշտ մակարդակ ապահովելու համար, ըստ Ս. Գլազևի ցուցանիշերի համակարգի, տարեկան թողարկվող արտադրանքի առնվազն 6% -ը պետք է կազմեն նորարարական ապրանքները: Նորարարական տնտեսություն ձևավորելու նպատակով պետությունը պետք է ուշադրությունը կենտրոնացնի ոչ միայն այն փաստի վրա, որ անհրաժեշտ է կիրառել գիտատեխնիկական առաջընթացի վերջին ձեռքբերումները, այլև պետք է կարևորի կապիտալի ներգրավումը դեպի այդ նվաճումները և խոչընդոտի երկրից դրա «արտահոսքը»[1:]

ԱՀ-ում 2018թթ. գիտական և գիտատեխնիկական ոլորտին բազային ֆինանսավորման և պետական նպատակային-ծրագրային ֆիանանսավորմանն ուղղված նախատեսված ծախսերը կազմել են 59մլն 515 դրամ՝ ՀՆԱ-ի 1%-ից էլ քիչ: Կառավարության 2020-2022թթ. ՄԾԾ-ի[2] շրջանակներում սահմանվել են գիտության ոլորտի զարգացման հետևյալ գերակա ուղղությունները.

- գիտության և տեխոնոլոգիաների բնագավառում միասնական քաղաքականության մշակում և իրականացում,
- գիտության ֆինանսավորման արդյունավետության բարձրացում,
- գիտության ոլորտում երիտասարդ կադրերի ամրապնդման ապահովում:

Նշված ծրագրով նախատեսվել է ծախսերի շարունակական աճ, սակայն միջոցների ծավալը դեռևս հեռու է զարգացման առումով պահանջվող ցուցանիշներից: Նշենք, որ 2020թ. ԱՀ պետական բյուջեով գիտական, գիտատեխնիկական պետական նպատակային ծրագրերի իրականացման նպատակով նախատեսվող գումարը առաջարկվում է ուղղել 2019թ-ին սկսված և նախարարության կողմից հայտարարված՝ գիտական հետազոտական նախագծերի մրցույթի արդյունքներով ընտրված 14 թեմաների ֆինանսավորմանը:

Նորամուծության առումով առավել ճկուն է ՏՏ ոլորտը: Այն նաև կարևոր է ՏԱ անվտանգության առումով: Չունենալով բնական հարուստ պաշարներ՝ ԱՀ գլխավոր ներուժը մարդկային ռեսուրսն է, և ՏՏ-ն այն ոլորտն է, որտեղ այդ պոտենցիալը կարող է իրացվել ամենաարդյունավետ ձևով: Արցախն ունի լուրջ պոտենցիալ և առկա պայմաններում ոլորտում առաջընթաց ապահովելու հարցում կարևոր է համապատասխան ինտելեկտուալ ռեսուրսների ռացիոնալ կիրառումը՝ հնարավորություն տալով ՏՏ ոլորտին՝ կարևոր դերակատարություն ստանձնելու տնտեսության զարգացման գործում: Արցախում ՏՏ ոլորտի մեծությունը դեռևս փոքր է. ոլորտում ընդգրկված է ընդամենը 10 կազմակերպություն,

---

[1] ***Гладких Е. Л.***, *«Эволюция экономической безопасности», «Ростовский научный журнал», 2016, стр. 100-116*

[2] https://minfin-nkr.am/?section=resources/index&type=5&subtype=84

որտեղ ներգրավված մասնագետները կազմում են ընդհանուր զբաղվածների 1.05%-ը , և որը ստեղծում է ՀՆԱ-ի մոտ 0.1%-ը՝ ունենալով տարեկան մոտ 241 մլն դրամի շրջանառությունը: Իսկ տեղեկատվության և կապի ոլորտում զբաղվածների թիվը կազմել է մոտ 400 մարդ կամ ընդհանուր զբաղվածների 0.7%-ը: Չնայած ՏՏ ոլորտի թվարկված ցուցանիշներն այդքան էլ տպավորիչ չեն, ՀՆԱ-ի կազմում մասնաբաժինը այդքան էլ մեծ չէ, սակայն ոլորտը գրանցում է աճի կայուն միտումներ: ՏՏ ոլորտի զագացման առումով առջնահերթ է կառավարության կողմից խրախուսման քաղաքականությունը և աջակցման ծրագրերի իրականացումը:

Իսկ արտաքին առևտրի ձևախեղումները վկայում են ԱՀ տնտեսության մրցունակության լուրջ խնդրի և ներմուծումից կախվածության առկայության մասին: ԱՀ-ում 2018թ. համեմատությամբ 2019թ-ին արտաքին առևտրաշրջանառության ծավալը աճել է 18.2 տոկոսով, ընդ որում, արտահանումը՝ 40.1 տոկոսով[1], իսկ ներմուծումը՝ 5.7 տոկոսով: Արտահանման և ներմուծման կառուցվածքներում բարձր տեսակարար կշռով առանձնանում են հանքահումքային մթերքները: Արտահանվում են նաև կենդանական և բուսական արտադրանք, պատրաստի սննդի արտադրանք, քարից, փայտից, կաշվից իրեր, էլետրաէներգիա՝ ընդլայնելով առևտրաշրջանառության աշխարհագրությունը Վրաստան, Իրան, Միացյալ Թագավորություն, Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Մերձբալթյան Հանրապետություններ, ԱՄՆ, սակայն ներքին սպառման մեջ ներմուծման տեսակարար կշիռը դեռևս բարձր է շեմային մեծությունից: Ըստ Ս. Գլազևի ՏԱ ցուցանիշների շեմային մեծության՝ ներմուծման տեսակարար կշիռը ներքին սպառման մեջ չպետք է գերազանցի 30% -ը: ԱՀ արտահանման և ներմուծման ապրանքային և աշխարհագրական տարբերակվածության ցածր մակարդակը կարելի է որակել որպես արտաքին տնտեսական սպառնալիք: Տասնամյակներ շարունակ ԱՀ արտահանման ավելի քան 80%-ը բաժին է ընկնում նույն հիմնական ապրանքախմբերին՝ վկայելով ԱՀ արտահանման բարձր աստիճանի կենտրոնացվածության մասին՝ հղի համապատասխան ռիսկերով: Նախ՝ ԱՀ արտահանումը՝ երկրներում եկամուտների, նախասիրությունների փոփոխությամբ պայմանավորված, կարող է կտրուկ կրճատվել: Մյուս կողմից՝ այդ ոլորտից տնտեսական օգուտները համեմատաբար փոքր են, քանի որ ԱՀ արտահանումը կենտրոնացված է հումքի և ցածր ավելացված արժեք ունեցող ապրանքախմբերի վրա: Ներկա զարգացումները ասվածի վառ վկայությունն են, երբ հանքահումքի միջազգային գները նվազել են, որի հետևանքով ԱՀ տնտեսությունը կրում է զգալի կորուստներ:

Ներքին խնդիրներից ՏԱ անվտանգության առումով կարևոր են սոցիալական բնութագրիչները՝ գործազրկության բարձր մակարդակը,

[1] http://www.stat-nkr.am/

տրասֆերտների ցածր մակարդակը, աղքատության մակարդակը և հատկապես դրանց տարբերությունները ըստ շրջանների: Նվազագույն կենսամակարդակից ցածր եկամուտներ ունեցող մարդկանց թիվը կազմում բնակչության թվաքնակի 0,2 մասը՝ շեմայինի 0,07-ի դիմաց: Համավարակով պայմանավորված իրավիճակը կարող է առավել սրվել: Չնայած կառավարության կողմից իրականացված որոշ միջոցառումներին՝ դրանց ծավալը և ընդգրման ոլորտները բավականին նեղ են և չեն կարող չեզոքացնել նոր իրավիճակով պայմանավորված կորուստները:

Հաջորդ կարևոր գործոնը բյուջեի դեֆիցիտն է ՀՆԱ-ի նկատմամբ, որը զուտ հայկական ֆենոմեն չէ, այլ առկա է աշխարհի բազմաթիվ երկրներում: Այսպես, ըստ ամերիկյան Citibank-ի հետազոտության արդյունքների, ներկայումս համաշխարհային ՀՆԱ-ի շուրջ 40%-ը ստեղծվում է այն երկրներում, որոնց բյուջեի պակասուրդը գերազանցում է ՀՆԱ-ի 10%-ը: ԱՀ-ի պարագայում այս ցուցանիշը 2014 թվականի 24.8 %-ի դիմաց 2018 թվականին կազմել է 16,2 %(2019թ. բյուջեն պրոֆիցիտային էր): Չնայած փոփոխության ընդհանուր դրական միտումներին՝ այնուամենայնիվ վտանգն այն է, որ տնտեսական զարգացումների ներկա միտումները կանխորոշում են բյուջեի հավասարակշռության ապահովման առումով ոչ բարենպաստ սցենարներ:

Տնտեսական անվտանգության ցուցանիշների համակարգում կարևոր ցուցանիշներից են ինֆլյացիայի ընդհանուր մակարդակը, կյանքի միջին տևողությունը, հանցագործությունների թիվը, որոնք ԱՀ-ում անվտանգության առումով նպաստավոր են: (Հավելված 6), (Հավելված 7):

Հաճախ տնտեսական անվտանգության խնդիրները պայմանավորված են քաղաքական, ռազմական և այլ բնույթի գործոններով, որի դասական օրինակներից է ԱՀ պետական սահմանին ռազմական լարվածության առկայությունն ու դրա պարբերական սրումը: ԱՀ-ի դեպքում տնտեսական անվտանգության արտաքին զուտ տնտեսական բնույթի սպառնալիքներից է ԱՀ արտաքին տնտեսական տրանսպորտային հաղորդակցման ուղիների ոչ բավարար մակարդակը, դրանով պայմանավորված՝ ԱՀ-ի դուրս մղվածությունը տարածաշրջանային ենթակառուցվածքային ծրագրերից: ԱՀ ծովային սահմանի բացակայության և ցամաքային ճանապարհով դեպի ծով ելքի միայն 2 սահմանակից տարածքների (Վրաստան, Իրան) օգտագործման հնարավորությունը ՀՀ տարածքը հատելու միջոցով ունի բավական մեծ ռիսկեր: Ընդ որում, Վրաստանի և Իրանի ծովափերով հնարավոր է ԱՀ արտադրանքի տեղափոխում միանգամայն տարբեր ուղղություններով՝ Վրաստանի տարածքով դեպի ՌԴ և ԵՄ երկրներ: Իսկ Իրանի տարածքով՝ դեպի Արևելյան Ասիայի և արաբական աշխարհի երկրներ: Եվ երկրներից յուրաքանչյուրը կարող է օգտվել որոշակի ուղղությամբ ապրանքների տեղափոխման իր մենաշնորհային դիրքից՝ դրանից բխող բոլոր բացասական հետևանքներով:

ՏԱ սպառնալիքներին հակազդող մարտավարական միջոցներից շարունակում է արդիական համարվել հարմարվողականությունը, որոնցից են առևտրային հարաբերությունների դիվերսիֆիկացիայի քաղաքականությունը, բազմակողմանի համագործակցության ամրապնդումը և խորացումը, սպառման որոշ մասի խնայողությունը և պաշարների ձևավորումը, շուկաներում ստեղծված իրավիճակների ճկուն օգտագործումը, ինչպես նաև արտահանմանն ուղղված արտադրությունների ձևավորումը և զարգացումը:

ԱՀ տնտեսության զարգացման ներկա պայմաններում առանձնապես լուրջ վտանգ են ներկայացնում թագավարակի հետևանքով տնտեսական որոշ գործունեությունների սահմանափակումը, ինչպես նաև առողջապահական ոլորտին հատկացվող ծախսերի կտրուկ աճը՝ բնականաբար ի հաշիվ սոցիալական այլ ծախսերի: Սահմանափակվել են այնպիսի գործունեություններ, ինչպիսիք են փոխադրումները, տուրիստական ծառայությունները, ռեստորանային, հյուրանոցային ծառայությունները և այլն: Այսինքն՝ այն լուրջ ազդեցություն է թողնում տնտեսության ծառայությունների ոլորտների վրա: 2019 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներին ԱՀ է այցելել 41 հազար 963 օտարերկրյա զբոսաշրջիկ՝ նախորդ տարվա 28 հազար 588-ի փոխարեն. գրանցվել է 46.7% աճ: Սակայն համաճարակի հետ կապված՝ 2020 թվականին այդ ցուցանիշը կնվազի՝ բացասաբար ազդելով տնտեսության տարբեր ճյուղերի՝ մասնավորապես հյուրանոցային, ռեստորանային բիզնեսների, արտադրության ծավալի, զբաղվածության և այլնի վրա:

Թագավարակի տարածմամբ պայմանավորված՝ ներկայում նվազում են արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքի թողարկման ծավալները համաշխարհային առումով: Հատկապես Չինաստանում, հարյուր հազարների հասնող արդյունաբերական ձեռնարկությունները պարապուրդի են մատնված և, եթե հաշվի առնենք, որ Չինաստանը արտահանում է աշխարհի արդյունաբերական արտադրանքի տարրերի ավելի քան 20%-ը, ապա գլոբալ տնտեսական աճի ավելի նվազ լինելը ավելի հավանական է դառնում, ինչն իր ազդեցությունն է թողնելու փոքր տնտեսությունների վրա, հետևապես պետք է կարևորվեն արդյունաբերության արտադրանքի այն տեսակները, որոնց արտադրության հնարավորություններն առկա են ԱՀ-ում:

Նոր իրավիճակը նաև ձևավորել է տնտեսության վարքագիծ և արտադրության նոր չափանիշներ և չափորոշիչներ: Տնտեսական վարքագծի մեջ նկատվում են հասարակության կողմից առավելապես առաջին անհրաժեշտության ապրանքների և ծառայությունների նկատմամբ նախապատվության աճ՝ փոխարեն ճոխության ապրանքների: Մյուս կողմից՝ նոր իրավիճակով պայմանավորված ձևավորվել է հիգիենայի պարագաների, հատուկ դեղամիջոցների նկատմամբ լուրջ պահանջարկ: Այս ամենը հանգեցնում են ինչպես տնտեսական կյանքի,

այնպես էլ հասարակական կյանքի նոր կանոնների, որոնց պահպանման պարագայում է միայն հնարավոր ապահովել անվտանգ արտադրական և հասարակական գործունեություն:

Նոր իրավիճակի պահանջով ԱՀ կառույցները թեև գործում են երկրի հնարավոր ներուժին համապատասխան, այնուամենայնիվ ակնհայտ է դառնում, որ այսպիսի իրավիճակների հետ կապված կարևոր է պետական կառավարման կառույցների համապատասխան կադրային ներուժի, պահուստների (արյան, պարենային ապրանքների, մանկական սնունդի, դեղորայքների և այլն) ձևավորումը և այլն:

Թագավարկով պայմանավորված՝ առանձնապես շեշտադրվեցին պարենային ապահովության հարցերը: ԱՀ-ն հիմնական պարենամթերքների առումով ունի ապահովության բավարար մակարդակ, և զարգացման դեպքում կարող է ապահովել նաև ՀՀ-ին (ցորեն), սակայն բազմաթիվ ապրանքատեսակներով դեռևս ապահովությունը բավարար չէ: Պարենապահովությունը անվտանգության առումով միաժամանակ կարող է համարվել և' ներքին, և' արտաքին գործոն: Բնակչության պարենամթերքի ապահովության հարցերը լուծելու պարագայում կթուլանա ԱՀ տնտեսության կախվածությունը արտաքին տնտեսություններից և հնարավոր հետևանքներից, մյուս կողմից՝ կարող է ձևավորվել տնտեսական զարգացման նոր մոդել՝ վերափոխելով տնտեսության ուղղվածությունը հանքահումքային արտադրության գերակայությունից դեպի գյուղատնտեսության ոլորտ՝ նպաստելով գյուղմթերքներով ապահովության և տնտեսության մրցունակության բարձրացման: Նշենք, որ ԱՀ-ում գյուղատնտեսության ոլորտում գործում են որոշ հարկային արտոնություններ: Գյուղատնտեսական գործունեության իրականացումը օրենքով ազատված է հիմնական հարկատեսակներից, ԱԱՀ-ի, առևտրի հարկի վճարումից:

Տնտեսական անվտանգության հնարավոր սպառնալիքների բացահայտումը, դրանց վնասազերծման ուղղությամբ անհրաժեշտ միջոցառումների մշակումն ու իրականացումը առաջնահերթ նշանակություն ունեն երկրի տնտեսական անվտանգության ապահովման համար: Անդրադառնալով ներտնտեսական գործոնների կարգավորմանը՝ առաջնային հիմնախնդիր է հանրապետությունում ՏԱ ապահովման հայեցակարգի մշակումը, որտեղ հստակ պետք է սահմանվեն ԱՀ ՏԱ նպատակը, հիմնախնդիրները և դրանց լուծման մեխանիզմներն ու մեթոդները: Իսկ արտաքին տնտեսական գործոնների առումով կարևոր են այնպիսի միջոցառումները, որոնք կչեզոքացնեն արտաքին անբարենպաստ ցնցումների հետևանքով տնտեսության կորուստները՝ ապահովելով բնակչության բարեկեցության կայունություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մանասերյան Թ., ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան Տնտեսագիտության ինստիտուտ, Տնտեսական անվտանգություն, ռազմավարության ուրվագծեր, Երևան, Այլընտրանք, հետազոտական կենտրոն, 2014 էջ 836:
2. Աղայան Ա., Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Երևան, 2002, 89 էջ:
3. Գագյան Գ., Տնտեսական զարգացման հիմնադրույթները ազգային անվտանգության համատեքստում, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Երևան, 2002, 69 էջ:
4. Ղուշչյան Հ.Բ., ՀՀ տնտեսական անվտանգության հիմնահարցերը, Բանբեր, Երևանի համալսարան, 2000, N 3, 263 էջ:
5. Շահգելդյան Մ., Ազգային անվտանգություն. հասկացությունը, էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավանք» գիտակրթական հիմնադրամ, Երևան, 2002, 71 էջ:
6. Экономическая безопасность. Учебно-методическое пособие/ Крутиков В.К., Калуга: ИП Стрельцов И.А. (Изд-во «Эйдос»), 2017г., 196 с.
7. Абалкин Л. И., Экономическая безопасность России: угрозы и их отражение, Вопросы экономики, Москва, 1994, 435 стр.
8. Богомолов В., Эриашвили Н., Барикаев Е., Павлов Е., Ельчанинов М., "Экономическая безопасность". 2009г., Изд.: Юнити-Дана, с.296.
9. Stat-nkr.am
10. htt://www.tradingecenemics.com
11. htt://www.data.worldbank.org

Հավելված 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշի դինամիկան ԱՀ-ում 2015-2019թթ. նախորդ ժամանակաշրջանի համեմատ, (%)



Հավելված 2. ԱՀ ՀՆԱ-ի և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշները 2015-2019թթ.

Տարեթիվ	Համախառն ներքին արդյունք (շուկայական գներով, մլն դրամ)	ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով (հազար դրամ)
2015	209345.7	1443.8
2016	229651.6	1577.3
2017	272070.8	1855.9
2018	310252.7	2103.3
2019	342463.6	2307.6

Հավելված 3. ԱՀ ՀՆԱ-ի ծավալը 2015-2019թթ.(շուկայական գներով, մլն դրամ



Հավելված 4. ԱՀ 1 շնչի հաշվով ՀՆԱ-ն 2015-2019թթ. (հազար դրամ)



Հավելված 5. ԱՀ բյուջեի դեֆիցիտը ՀՆԱ-ի նկատմամբ(2014-2019թթ.)



Հավելված 6. Բնակչության երկարակեցությունը ԱՀ-ում և շեմային մեծությունը (2014-2019թթ.)



Հավելված 7. Հանցագործության մակարդակը ԱՀ-ում և շեմային մեծությունը (2014-2019թթ.).



Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, տ.գ.դ. Թ.Ն.Մանասերյանը: